Ես խոստացայ խուլ լինել, մունջ լինել, խոստացայ կոյր գործիք լինել...: Ես խոստացայ անսիրտ, առանց կամքի մեքենայ լինել...

Ես կատարեցի իմ խոստմունքը:

Պարսկաստանում այն ժամանակ դեռ նոր էր կազմոել մի գաղտնի հիմնարկութիւն, որ կոչւում էր «Ֆարամուշխանա», այսինքն մոռացութեան տուն: Այս տան մէջ ընդունոելու գլխաւոր պայմանը այն էր, որ իւրաքանչիւր անդամ այնտեղից դուրս գալուց յետոյ պէտք է մոռացութեան տար բոլորը, ինչ որ տեսել, ինչ որ լսել էր այնտեղ: Այսինքն՝ պէտք է պահպանէր սաստիկ ծածկամտութիւն: Թէ ի՞նչ նպատակ ունէր այդ գաղտնի հիմնարկութիւնը, — ես չգիտեմ, որպէս չգիտէին նրա իւրաքանչիւր անդամները, թէ ինչ է գործում իրանից բարձր աստիճանի վրայ գտնոող անդամը: Կրտսեր անդամը աւագի հլու գործքին էր, պէտք է անպայման կերպով հնազանդոէր նրան, պէտք է կատարէր ամէն բան, ինչ որ կը հրամայէր նա, առանց գիտենալու, թէ ինչ նպատակով էր գործում: Հիմնարկութեան բուն խորհուրդը պահւում էր նրա գլխաւորների մօտ: Միւսները անգիտակցական մեքենաներ էին միայն: Անդամների իւրաքանչիւրը առանձին նշաններից կարող էր ճանաչել միւսին, առանց գիտենալու նրա անունը, նրա ո՛վ կամ ինչտեղացի լինելը: Միայն որոշ խմբեր իրանց մէջ գաղտնիք չունէին, իսկ ամէն մի խումբ առանձին վեր առած, միմեանց գործունէութիւնից տեղեկութիւն չունէին:

Կարծես, մի այսպիսի հասարակութեան մէջ էի ընկել ես: Ինձանից էլ խոստում առին, որ ամէն բան, ինչ որ կը տեսնեմ, ինչ որ կը լսեմ, մոռացութեան տամ: Ես կատարեցի իմ խոստմունքը: Իսկ այս տողերը, որ գրում եմ այժմ, — գրում եմ ուղիղ յիսուն տարուց յետոյ, երբ այն անձինքը այլեւս աշխարհի երեսին չեն մնացած, երբ նրանց գործունէութիւնը յայտնոեցաւ եւ անհետացաւ մի կարճատեւ փոթորիկի նման...

ԺԴ. ՁԻ

Դեռ երեխայութիւնից ես ձի նստելու սաստիկ սէր ունէի. այն ժամանակ այս ցանկութիւնը լցուցանում էի, հեծնելով փայտեայ երկայն ձողի վրայ, եւ ամբողջ ժամերով վազեցնում էի մեր բակում: Յետոյ, երբ փոքր-ինչ մեծացայ, իմ փայտեայ նժոյգին փոխարինեցին կենդանի արարածներ: Մեր հորթերը հանգստութիւն չունէին ինձանից, եւ մինչեւ անգամ ահագին գայլանման Մըրոն — մեր շունը — երբեմն ստիպած էր ծառայել իմ զոարճութիւններին: Ես բռնում էի նրա երկայն ականջներից, թռչում էի մէջքի վրայ, եւ խեղճ